

**Սոթքի ոսկու հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերլուծություն**

1. Ներածություն

Սոթքի ոսկու հանքավայրը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Սևանա լճից 30 կմ դեպի արևելք, Սոթք բնակավայրից 13 կմ հեռավորության վրա: Արտադրական հրապարակը գտնվում է Սոթք գյուղից 7 կմ հեռավորության վրա: Հանքավայրը գտնվում է ծովի մակարդակից 2150-2530 մ բարձրության վրա: Բացահանքի տարածքը կազմում է 97 հա: Հանքի նախագծային հզորությունն ըստ հանքաքարի կազմում է 1.0մլն. տ/տարի: Հանքավայրը շահագործում է «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ն:

Սոթքի ոսկու հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի բնապահպանական մասը մշակվել է 2012 թվականին: «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ն նախագիծը 2013 թվականին ներկայացրել է Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: Նախագիծը ՀՀ ԲՆ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2013 թվականին (18.01.2013) ստացել է դրական եզրակացություն:

2. Շրջակա միջավայրի պահպանում բաժնի նկարագրությունը

Շրագրի բնապահպանական մասը կազմվել է 2012 թվականին: Շրջակա միջավայրի պահպանում բաժինը բաղկացած է 13 ենթաբաժնից, 3 հավելվածից, ծավալը կազմում է 123 էջ, տես [1]:

3. Շրջակա միջավայրի պահպանում բաժնի թերությունները:

Նախագծում շրջակա միջավայրի բաղադրիչների ներկա վիճակի բնութագիր ներկայացված է շատ թերի:

Օրինակ, Սոթք գետի բնութագիրը տրված է միայն հիդրոլոգիական (տես 2.3.1. ենթաբաժին, 15-16 էջեր) և հիդրոքիմիական (տես 2.3.2. ենթաբաժին, 16-18 էջեր) տվյալների հիման վրա, իսկ հիդրոմորֆոլոգիական, հիդրոկենսաբանական տվյալներ և գնահատականներ ներկայացված չեն: Հատակային նստվածքների ու սուբստրատների քիմիական կազմի մասին տեղեկատվություններ նույնպես ներկայացված չեն:

Գրականության մեջ հայտնի են տվյալներ, համաձայն որոնց (տես՝ K. Danielyan, ect., "Integrated assessment of the lake Sevan environmental conditions (geo – lake sevan)". Association "For SHD" /UNEPCom; UNEP GRID Arendal. pp. 100. Yerevan, 2011, 32-33 էջեր) Սոթքի հանքավայրի շահագործման հետևանքով, Մասրիկ գետի գետաբերանի հատվածի ջրերում և հատակային նստվածքներում մի շարք մետաղների և տարրերի կոնցենտրացիաների արժեքները բավականին բարձր են ակունքային հատվածի և Սևանի ավազանի մյուս գետերի գետաբերանների ջրերի և հատակային նստվածքներում դիտվող արժեքների համեմատությամբ: Ներկայացված նախագծում Սոթք և Մասրիկ գետերի էկոհամակարգերի որակի վրա հանքավայրի շահագործման բացասական ազդեցությունը ընդհանրապես քննարկված չէ: Նախագծի 10.4.2.Աղտոտող նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքերը ենթաբաժնում (տես էջ 109) ուղղակի նշված է՝

«Ձեռնարկության կեղտա-ջրերով ջրային ռեսուրսներ թափվող բոլոր աղտոտող նյութերի արտահոս-քերը համապատասխանում են նորմատիվ պահանջներին: Գետի նորմատիվ

որակը պահպանվում է, գետի աղտոտում տեղի չի ունենում»: **Վերջին պնդումը ուղղակի հակասության մեջ է գիտական գրականությունից հայտնի տվյալների հետ: Քանի որ հանքավայրը ըստ էության, իսկ Սոթք և Մասրիկ գետերը փաստացի գտնվում են Սևանա լճի ավազանի տարածքում, վերոնշյալ հարցը խիստ կարևոր է Սևանի պահպանության տեսանկյունից:**

Ծրագրի 6-րդ ենթաբաժնում, 1,5 էջի վրա (տես 66-67 էջեր) ներկայացված են նախատեսվող բնապահպանական միջոցառումները, որոնցից հիմնականներն են՝

- Տաք և չոր եղանակին բեռնվող լեռնազանգվածը, արտհրապարակը և մերձատար ճանապարհները պետք է ջրցանվեն, ինչը թույլ կտա կրճատել փոշու արտանետումները:
- Կվերականգվի բացահանք տանող ճանապարհների դրենաժային համակարգը (կողային առվակների վերականգնում), անձրևի և ձնհալի ջրերը կհավաքվեն և մաքրումից հետո կօգտագործվեն փոշենստեցման նպատակով:

Ներկայացված միջոցառումներն ունեն թեզիսային բնույթ, որևէ հաշվարկ, գնահատում, միջոցառումների պարբերականություն, ժամանակացույց, իրականացման վերահսկման ու արդյունավետության գնահատման մեխանիզմներ ներկայացված չեն: Ըստ էության հիմնավորված, հաշվարկված, մանրակրկիտ պլանավորված բնապահպանական միջոցառումներ ներկայացված չեն:

Ընդհանուր առմամբ, ներկայացված նախագծում շրջակա միջավայրի հիմնական բաղադրիչների (մթնոլորտային օդ, հողեր, մակերևույթային ջրեր) վրա ազդեցության գնահատականները թերի են կամ չեն համապատասխանում իրականությանը: Նախագծում շրջակա միջավայրի որոշ բաղադրիչների վրա ազդեցության վերլուծություն և գնահատում ընդհանրապես ներկայացված չէ: Օրինակ.

Էկոհամակարգային ծառայությունների նկարագրություն, այդ ծառայությունների վրա հանքի շահագործման ազդեցության գնահատականներ ընդհանրապես ներկայացված չեն:

Գնահատված չեն գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ու որակի վրա հանքի շահագործման հնարավոր ազդեցությունները:

Նախագծում փաստարկված, քանակական տվյալներով հիմնավորված, բնապահպանական և ռեկուլտիվացիոն միջոցառումներ, մոնիտորինային ծրագիր նույնպես ներկայացված չեն:

Ծրագրի բնապահպանական բաժնում հանրային առողջության, հանքարդյունաբերության ոլորտում շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող միջազգային առաջավոր փորձի, շրջակա միջավայրի պահպանության հարցերով ՀՀ միջազգային պարտավորություններից բխող թեմաներն ընդհանրապես բացակայում են:

Ամփոփում/ եզրակացություն

Վերևում ներկայացված դիտողությունները, ցույց են տալիս, որ Սոթքի ոսկու հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի Շրջակա միջավայրի բնապահպանական մասը մասնագիտական տեսանկյունից ծայրահեղ թերի է, այն չի համապատասխանում ՀՀ գործող օրենսդրությանը և ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից բխող պահանջներին:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին

“ԳեոՊրոՄայնինգ Գոլդ” ՍՊԸ-ն շահագործման թույլտվության համար 2013 թվականին Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ներկայացրել Սոթքի ոսկու հանքավայրի շահագործման աշխատանքային նախագիծը: Նախագծի Բնապահպանական մասը ՀՀ ԲՆ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2013 թվականին ստացել է դրական եզրակացություն (ԲՓ թիվ 02, 18.01.2013):

Որպես փորձաքննական ներկայացված է 6 պահանջ:

1. Արգելվում է Սոթքի բացահանքի ջարդման տեղամասում ստացվող հանքանյութի հետագա վերամշակումը Սոթքի հանքի տարածքում...:
2. Նախագծի իրականացման և հանքի շահագործման ողջ ընթացքում առաջացած շինադրի, կենցաղային աղբի և արտադրական թափոնների տեղադրումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Պահպանել ջրօգտագործման և ջրահեռացման նորմերը:
4. Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիտորինգի, հետնախագծային միջոցառումների իրականացման և վերլուծության հաշվետվությունը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հասարակության համար:
5. Հանքաջրերի մաքրման կայանների նախագծային փաստաթղթերը ներկայացնել ՀՀ ԲՆ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
6. Մինչև խախտված տարածքների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացումը անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան նախագծային փաստաթղթերը ներկայացնել ՀՀ ԲՆ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Ակնհայտորեն 2-6 պահանջները փորձաքննական չեն, այլ գործող օրենսդրության պահանջներն են, որոնք ևս մեկ անգամ հիշեցնելու համար հատուկ ստեղծված ՊՈԱԿ-ի, փորձաքննական եզրակացություն ստանալու բյուրոկրատական տևական գործընթացի, վերոնշված «փորձաքննական» պահանջներով փորձաքննության անհրաժեշտություն չկա: Այն հանգամանքը, որ “ԳեոՊրոՄայնինգ Գոլդ” ՍՊԸ-ի ներկայացրած ծրագրի բնապահպանական մասում շրջակա միջավայրի մոնիտորինգ նախատեսված չէ, փորձաքննության եզրակացության վրա չի ազդել և մոնիտորինգի իրականացումը նույնիսկ չի դարձել փորձաքննության պահանջ: Ավելին, որպես փորձաքննական պահանջ է ներկայացվել ծրագրով չնախատեսված մոնիտորինգի տվյալների հասանելիությունը:

Փորձաքննական 1-ին պահանջը բացարձակ անհասկանալի է: “ԳեոՊրոՄայնինգ Գոլդ” ՍՊԸ-ն 2012թ.-ին բնապահպանական փորձաքննության է ներկայացրել Սոթքի հանքավայրի ՇՄԱԳ-ը և ստացել է դրական եզրակացություն: 2013 թ-ի ներկայացված նախագիծը վերաբերվում է հանքաքարը հանքի տարածքում ջարդիչ կայանի կամ ինչպես նախագծում է ներկայացված՝ ջարդման-տեսակավորման տեղամասի գործարկմանը և տեղում հանքաքարի նախնական վերամշակմանը, տես նախագծի 4-րդ բաժինը: 2013 թ-ի ներկայացված նախագծով նախատեսվում է հանքաքարը նախ տեղափոխել մինչև հանքից 2.0կմ

հեռավորության վրա տեղադրված ջարդիչ կայան, ապա 7 կմ հեռավորության վրա գտնվող բարձրման հրապարակ, իսկ մակաբացման ապարները - դեպի արտաքին լցակայաններ:

Բացահանքը սպասարկելու համար նախատեսվում է օգտագործել գոյություն ունեցող արդյունաբերական հրապարակը, որը գտնվում է բացահանքի հարավ-արևմտյան մասում:

Ներկայացված նախագծով առաջարկվում է բացահանքից ջարդիչ կայան տեղափոխված հանքաքարը վերամշակել, մանրացնել տեղում՝ ջարդիչ կայանում, այնուհետև քարմաղի վրա իրականացնել հանքաքարի բաժանում երեք մասի: Ըստ նախագծի նախատեսվում է Արարատի հարստացուցիչ ֆաբրիկա տեղափոխել միայն մինչև 30 մ չափսերով ֆրակցիան, որը կազմում է հանքից տեղափոխված հանքաքարի 40 %-ը: Մնացած, քարմաղով անցած և տեսակավորված 60% ապարը, ըստ ներկայացված նախագծի, կտեղավորվի 3 տեղամասերում, հանքավայրի տարածքում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2013 թվականին (18.01.2013) տրված եզրակացության 1-ին փորձաքննական պահանջով փաստացի մերժվում է առաջարկվող տեխնոլոգիայով ջարդիչ կայանի գործարկումը և հանքանյութի վերամշակումը բացահանքի ջարդման տեղամասում:

Սակայն, փորձաքննական եզրակացության մեջ, թվարկված 6 փորձաքննական պահանջներին անմիջապես հետևում է աշխատանքային նախագծի բնապահպանական մասին տրվող դրական եզրակացությունը՝ սակայն..., վերամշակումը տեղում արգելող փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Ակնհայտ է հակասությունը.

Մի կողմից մերժվում է հանքանյութի վերամշակումը հանքի տարածքում, մյուս կողմից տրվում է դրական եզրակացություն հանքանյութի վերամշակման առաջարկված նախագծին, բայց վերամշակում չիրականացնելու պարտադիր պայմանով:

Փաստացի փորձաքննությունն որպես այդպիսին չի իրականացվել, լրացուցիչ հետազոտություններ ու գնահատումներ, ներկայացված գնահատականների ու կանխատեսումների վերլուծություններ, ստուգիչ վերահաշվարկներ չեն իրականացվել: Նշված գործողությունների կատարման պահանջ “ԳեոՊրոՄայնինգ Գոլդ” ՄՊԸ-ին նույնպես փաստացի չի ներկայացվել:

Չնայած վերոնշյալ հիմնարար թերություններին, ՀՀ ԲՆ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ը 2013 թվականին (18.01.2013), ըստ էության նոր նախագծին, ֆորմալ մոտեցմամբ, դեկլարատիվ բնույթի շաբլոնային ձևակերպումներով, տվել է ՀՀ օրենսդրությանը բացահայտ հակասող, աննախադեպ ու ակնհայտ հակասություններով ձևակերպված դրական փորձաքննական եզրակացությունը:

29.10. 2016

Սեյրան Մինասյան